Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման
Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ վարչապետի 26.05.2025թ. 449-Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) Դավիթ Խուդաթյան, ՀՀ ՏԿԵ նախարար
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը
Գերմանիայի Դաշնային Հանրապետություն /Նաումբուրգ/
5. Գործուղման ժամկետները 13.06-16.06.2025թ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ 2025 թ. ՀՀ պետական բյուջե
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)
□ *ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը*
□ *բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն*

Ծախսի տեսակը		*Դավիթ Խուդաթյան*	**Ընդամենը**
Ճանապարհա ծախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	**302753**	**302753**
Գիշերավարձ /հյուրանոցային փաստաթուղթ/	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	105	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	45846	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	***137538***	***137538***
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	116	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	50447	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	***201789***	***201789***
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր դիվանագիտական սրահից օգտվելու վճար		
Ընդամենը ծախսեր		***642080***	***642080***

18.06.2025
Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025թ. հունիսի 13-ից 16-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ Նաումբուրգ կատարած գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Դավիթ Խուդաթյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, ք. Նաումբուրգ, հունիսի 13-16-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Հրավերը ստացվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Նաումբուրգի քաղաքապետ Արմին Մյուլլերից

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Մասնակցություն Արմավիր և Նաումբուրգ քաղաքների միջև գործընկերության մասին համաձայնագրի ստորագրման և Նաումբուրգի տաճարի հարակից այգում տեղադրված հայկական խաչքարի բացման հանդիսավոր արարողություններին:
   Բացվեց 13-րդ դարի հայկական խաչքարի կրկնօրինակը, որի տեղադրման գաղափարը կյանքի է կոչվել Հայաստանի Հանրապետության վարչապետի և Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Լանդթագի նախագահ Գունար Շելենբերգերի միջև ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում: Խաչքարի բացման արարողության ժամանակ նախարար Խուդաթյանը հանդես է եկել ելույթով:
   Երկկողմ հանդիպումներ են տեղի ունեցել Սաքսոնիա-Անհալթ երկրամասի փոխվարչապետ, գիտության, էներգետիկայի, կլիմայի պաշտպանության և շրջակա միջավայրի նախարար Արմին Վիլինգմանի և Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Լանդթագի նախագահ Գունար Շելենբերգերի հետ:
   Ենթակառուցվածքային շինարարության ոլորտում ԳԴՀ լավագույն փորձին ծանոթանալու նպատակով կազմակերպվել են շրջայցեր շինարարական տեղամասերում:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Սաքսոնիա-Անհալթ երկրամասի փոխվարչապետ, գիտության, էներգետիկայի, կլիմայի պաշտպանության և շրջակա միջավայրի նախարար Արմին Վիլինգմանի հետ հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել վերականգնվող էներգետիկայի ուղղության զարգացմանը, կուտակիչ կայանների, ջրածնային էներգիային վերաբերող հարցերին, քննարկվել են աշխատանքային այլ հարցեր ևս:

Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Լանդթագի նախագահ Գունար Շելենբերգերի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են մարզերի և քաղաքների միջև ապակենտրոնացված համագործակցության հետ կապված հարցեր, անդրադարձ է կատարվել երկուստեք կարևոր թեմաների:

Նախարարը գոհունակությամբ է վկայակոչել գերմանական միջազգային համագործակցության գործակալության («GIZ») և Վերականգնման վարկերի բանկի («KfW») աջակցությամբ ՀՀ համար առաջնահերթ ոլորտներում զարգացման կարևոր ծրագրերը, այդ թվում՝ «KfW» բանկի աջակցությամբ իրականացվող համայնքային ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ծրագրերը, KfW բանկի հետ ենթակառուցվածքային կենսական կարևորություն ունեցող ծրագրերի շուրջ տարվող ինտենսիվ աշխատանքները էներգետիկայի բնագավառում և ջրային ենթակառուցվածքների շինարարության ոլորտում:

Հանդիպման ավարտին նախարար Դ. Խուդաթյանը գրառում է կատարել Լանդթագի պատվո հյուրերի մատյանում:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպում Սաքսոնիա-Անհալթ երկրամասի փոխվարչապետ, Գիտության, էներգետիկայի, կլիմայի պաշտպանության և շրջակա միջավայրի նախարար Արմին Վիլինգմանի և Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Լանդթագի նախագահ Գունար Շելենբերգերի հետ:

Այցելություն և շրջայց GP Papenburg AG ճանապարհաշինական ընկերության կողմից կառուցվող շինհրապարակում ճանապարհաշինական ընկերության գործադիր տնօրեն Միրկո Գլացի ուղեկցությամբ:

Հանդիպում GP Papenburg ճանապարհաշինական ընկերության ղեկավար Գյունթեր Պապենբուրգի հետ:

Շրջայց Schulpforte ինտերնատ- գիմնազիայում:

Այցելություն Ռոսբախում <Herzer> գինեգործարան:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Այցի ընթացքում ստորագրվել է ՀՀ Արմավիր և ԳԴՀ Նաումբուրգ քաղաքների միջև գործընկերության մասին համաձայնագիրը /ստորագրել են Արմավիր համայնքի ղեկավար Վ. Սարգսյանը և Նաումբուրգի քաղաքապետ Ա. Մյուլլերը/:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նախարար Խուդաթյանը վերահաստատել է ՀՀ հանձնառությունը՝ ՀՀ-ԵՄ հարաբերություններում վերջին շրջանում արձանագրված զգալի առաջընթացի համատեքստում խորացնելու ՀՀ-ԳԴՀ բազմաոլորտ համագործակցությունը ՏԿԵՆ համակարգման պորտֆելի բոլոր ուղղություններով:
Առաջարկ է հնչել վերակնքելու նաև միջմարզային համաձայնագիրը Արմավիրի և Բուրգենլանդի միջև:
Առաջարկվել է ընդլայնել ապակենտրոն համագործակցության աշխարհագրությունը՝ հաշվի առնելով հաջողված փորձը:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

18 հունիսի 2025թ.